ՀՐԱՆՈՒՇ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅՈՑ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ 1917-1918 ԹԹ. ԵՎ ԳԵՐՄԱՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր *– Պ. Ռոհրբախ, Մ. Ռադե, Է. Շթիր, Լիպարիտ Նազարյանց, Բրեստ-Լիտովսկի պայմանագիր, Հայկական հարց, ինքնավարություն, Գերմանա-հայկական ընկերություն, կոտորած, հայկական պատվիրակություն, մեղսակցություն, բնաջնջում*

1917 թ. աշնանը Ռուսաստանում իշխանությունը գրաված բոլշևիկները խորհրդային իշխանությունն ամրապնդելու նպատակով իրենց առաջնորդ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ հայտարարեցին պատերազմից դուրս գալու, անհապաղ հաշտություն կնքելու, բաց բանակցություններ սկսելու մասին[1]: Ռուսական զորքերը սկսեցին լքել Արևմտյան Հայաստանը: Այսպիսի պայմաններում Գերմանիան սկսեց բանակցել Խորհրդային Ռուսաստանի հետ: Դեկտեմբերի սկզբին Բրեստ-Լիտովսկում մեկնարկած բանակցությունների ընթացքում, որոնցում վճռվելու էր նաև հայ ժողովրդի ճակատագիրը, Գերմանա-հայկական ընկերությունը (այսուհետ՝ ԳՀԸ) հանձն առավ գերմանական կառավարության մոտ պաշտպանել հայերի արդարացի ցանկությունները և հնարավորինս նպաստել դրանց դրական լուծմանը[2]:

Նշենք, որ դեռևս 1917 թ. սեպտեմբերին պատերազմը դադարեցնելու միջոցներ գտնելու նպատակով աշխարհի սոցիալիստական ուղղվածությամբ ուժերը Ստոկհոլմում հրավիրեցին կոնֆերանս, որտեղ ՀՅԴ լիազոր ներկայացուցիչ Ստեփան Զորյանը (Ռոստոմ) կազմկոմիտեին հղել էր ընդարձակ մի զեկուցագիր: Անդրադառնալով Օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրականացված եղեռնագործությանը՝ նա շոշափել էր ոչ միայն անմիջական հատուցման և վերապրողներին օգնություն ցուցաբերելու հարցը, այլև, ինչպես իր կուսակիցներից շատերը, շեշտել Արևմտյան Հայաստանի ազատագրության և ինքնավար կարգավիճակի միջազգային երաշխավորության անհրաժեշտությունը. «Ազատ Հայաստանը,– նշել էր նա,– պէտք է բովանդակէ հայկական 6 նահանգները եւ Կիլիկիան, բացի մահմետական շրջաններէ, որոնք հայկական նահանգներուն կցուած են 1877-1878 թթ. ռուս

---

[1] Տե՛ս Декреты Советской власти, т. I, 25 октября 1917 г. – 16 марта 1918 г., Москва, 1957, с. 12-16:

[2] Տե՛ս **Stier E.**, Spendenaufruf vom 25. Dezember 1917 // Lepsius-Archiv (այսուհետ՝ LAH), Halle, 1224:

և թուրք պատերազմէն ետք: Հայաստանը պիտի յայտարարուի չէզոք եւ իր չէզոքութիւնը երաշխաւորուի միջազգայնօրէն»[1]:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ՀՅԴ-ն հնարավոր գործակցության շուրջ բանակցություններ սկսեց բոլշևիկյան կառավարության հետ: Դեկտեմբերի սկզբին Թիֆլիսում և Պետրոգրադում գրեթե զուգահեռաբար ընթացող բանակցություններում, որոնք բոլշևիկների հետ վարում էին Ռոստոմն ու դաշնակցական հայտնի գործիչ, ԳՀԸ անդամ Լիպարիտ Նազարյանցը, Հայաստանի երկու հատվածների կարգավիճակի շուրջ ծավալվեցին քննարկումներ: Այդ բանակցությունների ընթացքում ընդունվեց «Թուրքահայաստանի մասին դեկրետը»: ՀՅԴ-ն չշեղվեց Հայկական հարցի լուծման՝ ստոկհոլմյան իր ուղեգծից: Դրանով կարծես թե ավարտուն տեսք էին ստանում դաշնակցականների որդեգրած՝ Արևմտյան Հայաստանի խնդրի լուծմանն առնչվող մոտեցումները:

Դաշնակցականների ու բոլշևիկների միջև համագործակցության նշույլներ էին նկատվում նաև Բրեստ-Լիտովսկի բանակցություններում: «Երբ խորհրդային իշխանությունը առաջին անգամ պատուիրակութիւն կուղարկէր հոն,– հիշում է Լ. Նազարյանցը,– նկատի ունենալով, որ հայկական հարցն ալ քննութեան առարկայ պիտի լինէր, Վահան Տէրեանը, իբրև հայ, նոյնպէս առնուեցաւ այդ պատուիրակութեան մեջ: Տէրեանը դիմեց մեզ՝ խնդրելով տալ իրեն պէտք եղած նիւթերը և ցուցումները»[2]:

Թեև Էնվերը և կովկասյան ճակատի հրամանատար Պրժևալսկին 1917 թ. դեկտեմբերի 5-ին Երզնկայում ստորագրել էին զինադադարի պայմանագրին կցված սահմանաբաժանման (դեմարկացիոն) գծի մասին արձանագրություն, որով ռուսական զորքերին վերապահվել էր մինչև Արևմտյան Հայաստանում վերջնական խաղաղության հաստատումն իրենց զբաղեցրած տարածքում գտնվելու իրավունք, բայց Բրեստ-Լիտովսկի բանակցություններում գերմանական բանակի գեներալ Էրիխ Լուդենդորֆը Քառյակ միության երկրների անունից ռուսական զորքերն այդ տարածքից դուրս բերելու պահանջ ներկայացրեց: Այս իրավիճակում 1917 թ. դեկտեմբերին-1918 թ. հունվարին հրապարակվեց Լենինի ու Ստալինի ստորագրությամբ վավերացված «Թուրքահայաստանի մասին դեկրետը», որն ազդարարում էր բոլշևիկյան կառավարության՝ հայ ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը պաշտպանելու պատրաստակամությունը[3]: Իրականում, սակայն, բոլշևիկների կողմից հայերին արված այս «շռայլությունը» քողարկման միջոց էր Քառյակ միության պահանջն ընդունելու համար, հանգամանք, որը պարզապես

---

[1] **Փամպուքեան Ե.**, Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. ԺԲ, Պէյրութ, 2016, էջ 270-274:

[2] **Նազարյանց Լ.**, Հայ յեղափոխական դաշնակցութեան եւ Խորհրդային իշխանութեան միջեւ համաձայնութեան փորձեր // «Դրօշակ», 1928, թիվ 8-9, օգոստոս-սեպտեմբեր, էջ 231:

[3] Տե՛ս **Lanne P.**, Der erste Völkermord des 20. Jahrhunderts, München, 1977, S. 176-177:

անհնար էր դարձնում արևմտահայերի ինքնորոշման իրավունքի կենսագործումը: Սա փաստացի դավադրություն էր հայ ժողովրդի դեմ. գերմանացիները, թուրքերը, իրենց իշխանությունը պահելու խնդիր ունեցող բոլշևիկները՝ որպես գերմանացիների կամակատար, միաբանվում էին հայության համար վտանգ ներկայացնող հարցի շուրջ:

Այս պայմաններում ԳՀԸ վարչությունը փորձեց չեզոքացնել հայ ժողովրդի ազգային իղձերի իրականացմանը խանգարող խոչընդոտները: Ուստի նրա վարչության անդամներ Պաուլ Ռոհրբախը, Էվալդ Շթիրը, Մարտին Ռադեն պատրաստեցին և 1918 թ. հունվարի 6-ին ռայխսկանցլեր Գեորգ ֆոն Հերտլինգին առաքեցին մի խնդրագիր, որտեղ նշվում էր, որ Արևմտյան Հայաստանում զինագրավված տարածքներից ռուսական զորքերը դուրս բերելու պարագայում եթե զուգահեռաբար չձեռնարկվեին տեղի քրիստոնյա հայ բնակչության անվտանգության ապահովման համար անհրաժեշտ միջոցներ, ապա սպասվում էին նոր սոսկալի բռնություններ, որոնք ամբողջ աշխարհում հուզումների ու բողոքի առիթ էին տալու: Այդ բողոքը, ինչպես փորձն էր ցույց տվել, առանց այլևայլության ուղղվելու էր նաև Գերմանիայի դեմ: Հետևաբար գերմանական կառավարությունը չպետք է ընդդիմանար Արևմտյան Հայաստանում հայկական ինքնավարություն ստեղծելու՝ ռուսական կառավարության առաջարկին, այլ առավելապես նպաստեր դրա կենսագործմանը՝ հերքելու համար գրեթե ամբողջ աշխարհի կողմից հնչող մեղադրանքը, թե Գերմանիան մեղսակից է վերջին տարիներին հայերի դեմ իրագործված բռնություններին[1]:

Փաստաթղթի հեղինակներն այնուհետև ներկայացրել էին մի շարք այլ հիմնավորումներ՝ փորձելով ռայխսկանցլերին հասկացնել իրենց խնդրանքին ընդառաջելու կարևորությունը.

1) Հայերն ակտիվ մասնակցություն են ունեցել Թուրքիայի տնտեսական ու քաղաքական կյանքին, արհեստագործության մի շարք ճյուղեր կենտրոնացած են եղել նրանց ձեռքում, և մինչև վերջին ժամանակները նրանք երկաթուղաշինության բնագավառում հավասարը չունեցող բանվորներ էին եղել: Նրանք եղել և մնում էին անփոխարինելի «տարր» Թուրքիայի առաջընթացի գործում: Քանի որ Գերմանիան հետամուտ էր իր գործունեությունն Արևելքում պատերազմից հետո ակտիվացնել առավել, քան նախկինում, նա պետք է սերտ կապ պահպաներ հայերի հետ ու երաշխավորեր նրանց գոյատևման հնարավորությունը:

2) Հայերի հետ լավ հարաբերությունները կարևոր էին նաև պատերազմից հետո Արևելքում գերմանական հսկայական կապիտալ ներդրումների անվտանգությունը ապահովելու տեսանկյունից:

---

[1] Տե՛ս Die Armenische Frage und der Genozid an den Armeniern in der Türkei (1913-1919). Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan, Jerewan, 2004, S. 468-469:

3) Անտանտի երկրները, մասնավորապես Անգլիան և Ֆրանսիան, հայերին անկախ պետություն ստեղծելու խոստումներ էին տալիս: ԱՄՆ-ն, որը Արևմտյան Հայաստանում հիմնել էր միսիոներական բազմաթիվ հաստատություններ ու խոշոր գումարներ հատկացրել՝ աքսորի հետևանքով այնտեղ առաջացած աննկարագրելի կարիքը մեղմելու համար, նույնպես, թեև մեկ այլ շեշտադրումով, հանդես էր գալու հայերի պաշտպանի դերում: Կարևոր էր, որ Գերմանիան այս հարցում չթողներ անբարյացակամ կամ անտարբեր դիտորդի տպավորություն: Միայն այն դեպքում հնարավոր կլիներ կանխել նշված տերությունների՝ հայերի վրա գերմանական շահերի համար վնասակար ներգործությունը, եթե գերմանական քաղաքականությունն աջակցեր Հայկական հարցի բարենպաստ լուծմանը:

4) Թուրքական կառավարությունը առանց հիմնավոր պատճառի հայերին աքսորել էր թե՛ պատերազմական գոտուց և թե՛ դրանից դուրս գտնվող տարածքներից: Թուրքիայում բնակվող շուրջ երկու միլիոն հայերից 700 000-ը (հիմնականում Կ. Պոլսի ու Զմյուռնիայի բնակիչները), փրկվել էին՝ փախչելով Կովկաս: Շուրջ 1 300 000 աքսորի դատապարտվածները քշվել էին անապատները, և նրանցից հազիվ թե մեկ քառորդն էր կարողացել հասնել աքսորավայրեր: Բացի այդ՝ թուրքերի կողմից հալածվող մեծ թվով հայեր հարկադրաբար իսլամացվել էին: Հայկական իրադարձությունների մասին փաստերն Անտանտի երկրները եռանդով ու հմտորեն օգտագործում էին՝ Գերմանիայի դեմ բողոքի ձայն բարձրացնելու համար, և նման միտումներ նկատվում էին նաև գերմանացիների նկատմամբ չեզոքություն պահպանող մի շարք այլ ժողովուրդների մոտ: Գերմանական կառավարությունը շատ ջանքեր էր գործադրել՝ կանխելու համար չարիքը, բայց հայերի հետ տեղի ունեցածի մասին պատերազմի ընթացքում ստիպված էր լռություն պահպանել՝ քաղաքական դրդապատճառներով: Ըստ այդմ՝ իրավական տեսանկյունից Գերմանիան մեղսակից էր հայ ժողովրդի բնաջնջմանը: Հայերին վերաբերող հարցերում նա կարող էր միայն արդյունավետ ու օպերատիվ գործողությունների միջոցով վերջ դնել իր հասցեին հնչող վտանգավոր մեղադրանքներին:

5) Պանթուրքական ու պանիսլամական տրամադրությունների վերելքը Թուրքիայում է՛լ ավելի անհրաժեշտ էր դարձնում քրիստոնյա հպատակների հետ կապի պահպանումը: Իհարկե, կարիք չկար, որ Գերմանիան Ֆրանսիայի նման քաղաքական շահերի թելադրանքով ստանձներ Թուրքիայի քրիստոնյաների պաշտպանի դերը, բայց գերմանական քաղաքականությունը պետք է որդեգրեր այնպիսի մոտեցում, որը վայել կլիներ Գերմանիային՝ որպես քրիստոնյա մեծ տերության:

6) Հայերի ցանկությունն էր հայկական ինքնավարության ստեղծումը: Դա չէր կարելի, ինչպես Թուրքիան էր պնդում պատերազմից առաջ, հայերի չափազանցված ու իմաստազուրկ պահանջ համարել, քանի որ Թուրքիայի հայկական նահանգները դատարկվել էին մուսուլմաններից, և հայերը,

որոնք վերադարձել էին Ռուսաստանից, այժմ այդ տարածքներում մեծամասնություն էին: Հետևաբար, այժմ ինքնավարության հարցի լուծումն ավելի դյուրին էր, քան նախկինում[1]:

Թեև մեզ մատչելի փաստաթղթերում ռայխսկանցլեր Հերտլինգի պատասխան նամակը չի հայտնաբերվել, բայց դիվանագիտական տեղեկագրերի բովանդակությունից ակնհայտ է հարցի շուրջ գերմանական կառավարության դիրքորոշումը: Այս առումով տեղին է հիշատակել Ռայխսթագում Գերմանիայի պետքարտուղարի տեղակալ Հիլմար ֆոն դեր Բուշեի պարզաբանումը: Ըստ նրա՝ Արևմտյան Հայաստանում ռուսների գրաված գավառներն ազատելու հարցը Բրեստ-Լիտովսկում բարձրացնելուց անմիջապես հետո իրենք հայերի հանդեպ ինչ վարքագիծ որդեգրելու առնչությամբ կապվել էին թուրք պետական այրերի հետ և փորձել նրանց հասկացնել, թե Թուրքիայի սեփական շահերի, ինչպես նաև դաշնակիցների հետ նրա փոխհարաբերությունների առումով որքան կարևոր է, որ այդ տարածք թուրքական զորքերի մուտք գործելու ընթացքում հայ բնակչության հանդեպ անկարգությունները բացառվեն, և քրիստոնյա ու մուսուլման տարրերի միջև խաղաղ փոխհարաբերություններ հաստատվեն: Նա նաև փաստել է, որ արյունահեղությունից խուսափելու համար իրենք խորհուրդ էին տվել պահպանել մուտք գործող զորամասերի կարգապահությունը, հայ կամավորական ջոկատներին կամովի ենթարկվելու կոչ անել, և եթե նրանք կհետևեին իրենց կոչին, ապա նրանց համաներում շնորհել, բացի այդ՝ առնվազն վճիռ կայացնել ու սկսել կայսրության խորքերը բռնագաղթվածների վերադարձը, ինչն այդ պահին փոխադրամիջոցների հետ կապված դժվարությունների պայմաններում, անշուշտ, իրագործելի չէր: Պետքարտուղարի տեղակալը նաև հավաստել է, որ թուրքական կառավարությունը, ի պատասխան իրենց հորդորների, հավաստիացրել էր, որ թուրքերը վճռել են հայերի հանդեպ մեղմ լինել ու կանխել այնպիսի դեպքերը, ինչպիսիք տեղի են ունեցել 1915 թ.[2]:

Ինչպես տեսնում ենք, գերմանական կառավարությունը, հայերի հարցում հավատարիմ մնալով իր ավանդական գործելակերպին, դաշնակցի անունից տալիս էր խոստումներ ու հավաստիացումներ՝ չնշելով դրանց իրականացման երաշխիքների կամ վերահսկման լծակների մասին: Միաժամանակ, ինչպես նշում է Ա. Հայրունին, Գերմանիան ոչ միայն չէր քաջալերում Օսմանյան կայսրությանը հանձնվող շրջանների հայաթափումը, այլև դրանում ամենևին շահագրգռված չէր[3]:

---

[1] Տե՛ս Die Armenische Frage und der Genozid an den Armeniern in der Türkei (1913-1919), S. 469-472:

[2] Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919, S. 375-376.

[3] Տե՛ս **Հայրունի Ա.**, Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թ., Երևան, 2013, էջ 8:

Ինչևէ, 1918 թ. փետրվարի սկզբին թուրքական „Agence Milli” լրատվական գործակալությունը հրապարակեց տեղեկություն Արևմտյան Հայաստանից ռուսական զորքերի հեռանալու և ազատված տարածքներում հայկական ավազակախմբերի վայրագությունների մասին: «Յուրաքանչյուրը,– գրում է Է. Շթիրը,– ով ծանոթ էր թուրքերի արտահայտչաձևին, պիտի երկյուղեր, որ դրանով օրինական պատրվակ է ստեղծվում հայերի նոր սպանդ իրականացնելու համար»[1]: Այդ նկատառումով ԳՀԸ-ն ուղերձով դիմեց Գերմանիայի ԱԳՆ-ին՝ փորձելով նրա ուշադրությունը բևեռել հայությանը սպառնացող նոր վտանգների վրա և հայցել նրա աջակցությունը: Միաժամանակ ԱԳՆ-ին դիմեցին նաև Արևելքի ու իսլամի հանձնաժողովի նախագահ Կարլ Թեոդոր Աքսենֆելդը[2] և հայ ժողովրդի շվեյցարացի բարեկամները: Ի պատասխան՝ Գերմանիայի պետքարտուղարի տեղակալ Բուշեն վստահեցրեց. «Անհանգստությունը, թե „Milli”-ի տարածած տեղեկությունն ահազանգ է հայության նոր սպանդ իրականացնելու համար, ըստ թուրքական կառավարության՝ իրենց (Գերմանիայի ԱԳՆ-ին – *Հ. Ս.*) ներկայացված պարզաբանումների, անհիմն է»[3]: «Ինչպես շուտով պարզ դարձավ,– գրում է Շթիրը,– մեր մտահոգությունը տեղին էր. Թուրքիան որոշել էր պատերազմի՝ իր համար բարենպաստ վիճակն օգտագործել այսուհետև նաև կովկասահայերին բնաջնջելու համար. այն դեպքում, երբ նա սարսափելի մահվան էր դատապարտել Թուրքիայում ապրող հայերի շուրջ երկու երրորդին»[4]:

Հիրավի, Կովկասյան ռազմաճակատից ռուսների հեռանալուց հետո՝ 1918 թ. փետրվարի կեսերին, Արևմտյան Հայաստանի բնակավայրերը դարձան թուրքական հարձակման ու նոր բարբարոսությունների թիրախ: Իսկ երբ Տրապիզոնի արդեն սկսված բանակցություններում Անդրկովկասյան սեյմը և, բնականաբար, դրա կազմում գտնվող հայ գործիչները հրաժարվեցին կատարել թուրքերի պահանջն ու չընդունեցին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի՝ Անդրկովկասին վերաբերող հոդվածը, որով նախատեսվում էր Օսմանյան կայսրությանը հանձնել Կարսի, Արդահանի ու Բաթումի մարզերը, թուրքական կանոնավոր բանակը շարժվեց դեպի Անդրկովկաս:

Թուրքական զորքերի առաջխաղացումը և հայ ժողովրդի հետ թուրքական նոր հաշվեհարդարի վտանգը ստիպեցին Պ. Ռոհրբախին, Է. Շթիրին և Մ. Ռադեին մարտի 19-ին ԱԳՆ-ին հանձնել հերթական խնդրագիրը, որով գերմանական կառավարությանն առաջարկվում էր անհապաղ գործուն քայլեր ձեռնարկել՝ Սիրիայի ու Միջագետքի հայ աքսորյալներին հայրենիք վերադառնալու հնարավորություն ընձեռելու և Հայաստանում թուրքական բա-

---

[1] **Stier E**., Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft, 21. Mai 1919 // Evangelisches Zenrtalarchiv in Berlin (այսուհետ՝ EZA Berlin), S. 15.

[2] Տե՛ս Deutschland und Armenien 1914-1918, S. 368-371:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

նակի ու հայ կամավորների միջև բռնկված մարտերը դադարեցնելու համար, հակառակ պարագայում ստեղծված իրավիճակը հանգեցնելու էր Թուրքիայում հայ ժողովրդի բնաջնջմանը: Այդ դեպքում ամբողջ աշխարհը, չնայած այն ամենին, ինչը գերմանական կառավարությունն արել էր հայությանը փրկելու համար, Գերմանիային մեղսակից էր համարելու հայ ժողովրդի բնաջնջման հարցում: Հետևաբար, հետագա մեղադրանքներից խուսափելու համար փաստաթղթի հեղինակներն առաջարկում էին նկատի ունենալ, թե Օսմանյան կայսրության և մարտնչող հայերի միջև միջնորդությամբ հանդես գալու ինչ հնարավորություններ կային, որպեսզի հայերը զենքը վայր դնեին: Անհրաժեշտ էր Օսմանյան կայսրությանը դրդել, որ նրանց՝ կյանքի, գույքի, պատվի ապահովության երաշխիքներ տար: Նրանց համոզմամբ՝ ինքնակառավարման համար լավագույնն այն հիմնադրույթներն էին, որոնց շուրջ պայմանավորվել էին Օսմանյան կայսրությունն ու տերությունները պատերազմի բռնկումից առաջ: Ռազմական գործողությունները դադարեցնելու զուգահեռ՝ պետք է կազմակերպվեր աքսորյալների վերադարձը:

Նրանց խորին համոզմամբ՝ Գերմանիան միակ տերությունն էր, որն ի վիճակի էր անել այդ ամենը, իսկ եթե ձեռնպահ մնար, ապա նրա համար Հայկական հարցը, չնայած բոլոր հակամիջոցառումներին, հետագա խաղաղության բանակցություններում դառնալու էր շատ անհաճո մի թեմա: Մինչդեռ եթե հաջողվեր հասնել համաձայնության, և գոհացում տրվեր հայերին, ապա Գերմանիայի թշնամիներն այլևս չէին կարող գերմանացիների դեմ օգտագործել հայկական հիմնահարցը[1]:

Չսահմանափակվելով սրանով՝ ԳՀԸ վարչությունը[2] դիմեց նաև Ռայխսթագի պատգամավորների օգնությանը, և նրանցից ոմանց՝ մասնավորապես Վիկտոր Նաումանի միջնորդությամբ՝ հարցի շուրջ իր մտահոգությունները կարողացավ մի քանի անգամ ներկայացնել Գերմանիայի ԱԳՆ-ին: Սակայն

---

[1] Տե՛ս Die Armenische Frage und der Genozid an den Armeniern, S. 482-484:

[2] Ուշագրավ է, որ ոչ միայն Բրեստ-Լիտովսկի, այլև Տրապիզոնի ու Բաթումի բանակցությունների ընթացքում ԳՀԸ-ն փորձում էր Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի եղերական ճակատագրի վերաբերյալ փաստերի, իրավիճակը լուսաբանող հոդվածների միջոցով ի նպաստ վտանգված հայության՝ ազդել գերմանական կառավարության դիրքորոշման վրա ու դրդել նրան ազդու միջամտությամբ հայ ժողովրդին փրկել լիակատար բնաջնջումից: Այդ նպատակով Է. Շթիրը գրեց մի մեկնաբանություն «Միություն և առաջադիմություն» կուսակցության 1917 թ. սեպտեմբերի 24-ի ժողովում Թալեաթ փաշայի արտասանած, այնուհետև գերմանական մամուլում հրապարակված ճառի վերաբերյալ: Հաջորդ հոդվածները վերաբերում էին հայ ժողովրդի աքսորին, աքսորյալ հայերի դրությանը Միջագետքում, Հայկական հարցի հանդեպ տարբեր երկրների դիրքորոշմանը, Կովկասում տիրող իրավիճակին, Անդրկովկասի տնտեսական նշանակությանը: Քանի որ գրաքննությունը դեռ արգելում էր Հայկական հարցի վերաբերյալ նյութերի հրապարակումը, մեքենագիր այդ հոդվածները Գերմանիայի «պետական այրերին» առաքվեցին փակ ծրարներով: Տե՛ս **Stier E.**, Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939) // „Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft", Nr. 5-6, Dezember 1939, S. 6 (70):

գերմանական կառավարությունը, որը ջանք չէր խնայում հայկական կողմին Բրեստի պայմանագրի ընդունման մտքի հետ հաշտեցնելու համար, այս անգամ որոշեց օգտագործել նաև հայ ժողովրդի գերմանացի բարեկամների ուժն ու հեղինակությունը և նրանց առաջարկեց համոզել հայերին՝ դադարեցնել անօգուտ դիմադրությունն ու բանակցել թուրքերի հետ իրենց հպատակման մասին: «Մոտակա համաներման վերաբերյալ կարգադրություն արձակելու համաձայնությունը կայացել է»,– նշում էր Բուշեն մարտի 21-ին Ռայխսթագում ունեցած ելույթի ժամանակ[1]:

Բացի այդ՝ առաջարկվեց նաև ազդել Ժնևի հայերի վրա և, «հայ ժողովրդի շահերից ելնելով, կանխել նրանց շրջանում ի հայտ եկող՝ Հայաստանի գործերին միջամտելու վերաբերյալ Անտանտի երկրներին ուղղված կոչերը»:

ԳՀԸ վարչությունը մարտի 18-ին ու ապրիլի 3-ին ԱԳՆ ուղարկված փաթեթների միջոցով տեղեկացրեց միջնորդությամբ հանդես գալու իր պատրաստակամության մասին՝ միաժամանակ ներկայացնելով հետևյալ պայմանները.

1) մարտնչող հայերին շնորհել համաներում այն իմաստով, որ կատարված գործողությունների պատճառով երբևէ հալածանքներ չլինեն, և արտագաղթել ցանկացող հայերին վերապահել ազատ տեղաշարժի իրավունք.

2) հարգանքով վերաբերվել Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերի բնակչության՝ վերջնական քաղաքական կարգավիճակը ինքնուրույն որոշելու իրավունքին.

3) ստանալ երաշխավորություն, որ Թուրքիան ոչ մի պարագայում չի գրավի Ռուսաց Հայաստանի տարածքը:

Այդ պայմաններից զատ՝ անդրադառնալով Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի բնաջնջման իրողությանը և այդ առիթով թշնամիների կողմից Գերմանիայի հասցեին հնչող մեղադրանքներին, ԳՀԸ պատասխանատուները մատնանշում էին այն ծանր հետևանքները, որ սպառնում էին Գերմանիային, եթե նա չաջակցեր հայերին՝ լիակատար ոչնչացումից նրանց փրկելու համար: Ըստ այդմ՝ նրանք հորդորում էին ԱԳՆ-ին ընդունել իրենց ներկայացրած վերոնշյալ պայմաններն ու դրանց կատարման պարագայում Թիֆլիս գործուղել ԳՀԸ անդամներից մեկին, որը պետք է համոզեր դաշնակցականներին՝ մարտնչող հայերին զենքը վայր դնելու կոչ անել: Ինչպես նշում է Շթիրը, այդ առաջարկն ԱԳՆ-ն մերժեց և, ի վերջո, պատրաստակամություն հայտնեց Գերմանիայում ապրող՝ ԳՀԸ վարչության առաջարկած հայերից մեկին[2] տալ ուղևորության թույլատվություն: Բայց դա նույնպես

---

[1] Der Völkermord an den Armeniern 1915-1916. Dokumente aus dem Politischen Archiv des Auswärtigen Amts. Herausgegeben von Wolfgag Gust, Spriege, 2005, S. 567.

[2] Խոսքը վերաբերում է Լայպցիգի համալսարանի ռուսահայ ուսանող Նաքսիմյանցին: Տե՛ս Der Unterstaatssekretär im Auswärtigen Amt (Bussche-Haddenhausen) an den Botschafter in Konstantinopel (Bernstorff) // http:www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1918-04-03-DE-001, PA-AA, R 14099:

չիրականացավ իրադարձությունների արագ զարգացման հետևանքով[1]:

1918 թ. ապրիլի երկրորդ կեսին, երբ թուրքական զորքերն արդեն հասցրել էին տիրանալ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Օսմանյան կայսրությանը հանձնվող տարածքներին և խորանում էին Անդրկովկասի հայկական բնակավայրերում՝ հայ բնակչության նկատմամբ դիմելով աննկարագրելի վայրագությունների, Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, այդ վայրերի հայ բնակչության անվտանգությունն ապահովելու հարցում ապավինելով Գերմանիայի աջակցությանը, պատվիրակություն գործուղեց Բեռլին, որի կազմում էին Արշակ Ջամալյանը, Լիպարիտ Նազարյանցն ու Գևորգ Մելիք-Ղարագյոզյանը[2]: ԳՀԸ-ի օգնությամբ հայ պատվիրակները ընդունելության արժանացան ԱԳՆ-ում: Այնուհետև Շթիրի ուղեկցությամբ նրանք հանդիպեցին Ռայխսթագի պատգամավոր Մաթիաս Էրցբերգերի հետ, մասնակցեցին ԳՀԸ վարչության խնդրանքով Ռայխսթագի շենքում Վ. Նաումանի կազմակերպած Հայկական հարցի քննարկմանը, որին ներկա էին Գերմանիայի Կենտրոն, Լիբերալ-ժողովրդական, Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչները (սոցիալ-դեմոկրատներից քննարկմանը մասնակցում էին Ֆրիդրիխ Էբերտը, Ֆիլիպ Շայդեմանը, Գուստավ Նոսկեն ու Ալբերտ Զյուսեկումը)[3]:

Ուշագրավ է, որ Ռայխսթագի պատգամավորների հետ պատվիրակության հանդիպումներից մեկի ժամանակ ներկաների վրա մեծ ազդեցություն էին գործել Պ. Ռոհրբախի հայանպաստ դիրքորոշումն ու պարզաբանումները: Ըստ Գ. Մելիք-Ղարագյոզյանի վկայության՝ նա կրկին անդրադարձել է իրավիճակի լրջությանը՝ մատնանշելով Հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի բարոյական պատասխանատվության հանգամանքը և այս առնչությամբ թուրքական կառավարության ցուցաբերած անտարբերությունը, որից հետո Ռայխսթագի՝ խորհրդակցությանը մասնակցող անդամների վերաբերմունքը փոխվել է դեպի պատվիրակության հիմնավորումները[4]:

Ապրիլի 27-ին ԳՀԸ վարչությունը նաև ուղերձ է հղել Ռայխսթագին՝ հիշեցնելով միջազգային պայմանագրերը չոտնահարելու և հայ ժողովրդի

---

[1] Տե՛ս **Stier E**., Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft, 21. Mai 1919 // http: www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1919-05-21-DE-001, PA-AA, R 14106:

[2] Պատվիրակությունը նախ ուղևորվեց Մոսկվա: Նրա երկու անդամները՝ Ա. Ջամալյանն ու Գ. Մելիք-Ղարագյոզյանը, Մոսկվա հասան մարտի 25-ին, որտեղ ապրիլի 7-ին նրանց միացավ նաև Լ. Նազարյանցը: Այնտեղ նրանք հանդիպումներ ունեցան Խորհրդային Ռուսաստանի ազգությունների ժողկոմ Ի. Ստալինի, ռազմական գործերով ժողկոմ Լ. Տրոցկու, արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Լ. Կարախանի և այլոց հետ: Չիչերինը, Կարախանը, Տրոցկին և այլ ղեկավար գործիչներ նրանց ցույց տվեցին գործնական աջակցություն, իսկ մասնավորապես Կարախանը տրամադրեց անցագրեր և այլ փաստաթղթեր, որոնցով նրանք նույնիսկ առանց ստուգման կարող էին սահմանն անցնել: Տե՛ս **Հայրունի Ա**., նշվ. աշխ., էջ 21-22:

[3] Տե՛ս **Stier E**., Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939), S. 7 (71):

[4] «Մշակ», 10 օգոստոսի 1918:

ինքնորոշման իրավունքը հարգելու անհրաժեշտության մասին. «Մենք հարցնում ենք՝ կարո՞ղ է արդյոք Գերմանիան, որը, ըստ երևույթին, անբարենպաստ քաղաքական իրադրության պատճառով չի խոչընդոտել Թուրքիայում հայերի ոչնչացումը, հանդուրժել, որ Կովկասի հայերը արժանանան միևնույն ճակատագրին: Գերմանիան միայնակ ի վիճակի է կանխելու թուրքերի աղետալի գործողությունները… Խոսքը շնորհալի քրիստոնյա ժողովրդի կյանքի ու մահվան մասին է, բացառիկ մշակութային արժեքների մասին: Բայց միևնույն ժամանակ խոսքը նաև գերմանացի ժողովրդի հետագա շահերի ու նրա՝ որպես քրիստոնյայի պարտականության մասին է»[1]:

Առաջարկվեց ուղարկել գերմանական հանձնաժողով, որը պետք է տեղում քններ իրադրությունն ու վերահսկեր Բրեստի պայմանագրի որոշումների իրականացումը[2]: 1918 թ. մայիսի 6-ին Վ. Նաումանը, հիմք ընդունելով ԳՀԸ-ի ներկայացրած հուշագրերը[3], հարցը քննարկման դրեց Ռայխսթագի գերագույն հանձնաժողովի նիստում[4]: Շթիրի վկայությամբ՝ գաղտնի այս քննարկման ժամանակ կառավարությունը մանրամասն տեղեկություն տվեց հանուն հայերի՝ թուրքական կառավարության մոտ գործադրած ջանքերի մա-

---

[1] **Stier E**., Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939), S. 7 (71).

[2] ԳՀԸ-ի միջոցով համանման բովանդակությամբ մեկ այլ ուղերձ ապրիլի 29-ին Գերմանիայի ԱԳՆ-ին հանձնեց Բեռլին ժամանած հայկական պատվիրակությունը: Դրանում ընդգծելով, որ միայն Գերմանական կայսրությունն էր ի վիճակի կասեցնել թուրքական ոճրագործությունները, մատնանշվում էին այն միջոցառումները, որոնց իրականացման դեպքում հնարավոր կլիներ ապահովել Կովկասի հայ բնակչության անվտանգությունը: Ըստ այդմ՝ նախ և առաջ անհրաժեշտ էր իսկույնևեթ կանգնեցնել թուրքական բանակի առաջխաղացումը: Այնուհետև իրագործել Կարսի, Արդահանի և Բաթումի բնակչության ինքնորոշման իրավունքն այն կարգով, որ հաշվի առնվեր ազգային պատկանելության գործոնը, և քվեարկության իրավունք տրվեր նաև փախուստի դիմած բնակիչներին: Բացի այդ՝ հարկավոր էր թուրքերին արգելել որևէ պատրվակով խախտել Բրեստի պայմանագրով ամրագրված սահմանները: Թուրքերը իրավունք չպետք է ունենային միջամտել Կովկասի ներքին գործերին: Հարկավոր էր ապահովել այն հայերի անվտանգությունը, որոնք բնակություն կհաստատեին Թուրքահայաստանում կամ կցանկանային վերադառնալ այնտեղ գտնվող իրենց բնակավայրերը: Այնուհետև ընդգծելով, որ առաջին երեք առաջարկները համապատասխանում էին Բրեստի պայմանագրի որոշումներին՝ պատվիրակությունը հույս էր հայտնում, որ պայմանագիրը ստորագրած Գերմանիան դրա ոտնահարումը չի հանդուրժի: Վերջում պատվիրակությունը խնդրում էր առանց ժամանակ կորցնելու մի գերմանական հանձնաժողով ուղարկել՝ տեղում իրադրությունը քննելու, վերոնշյալ առաջարկներին ընթացք տալու և վերահսկողություն իրականացնելու համար: Տե՛ս **Հայրունի Ա**., նշվ. աշխ., էջ 23-24:

[3] 1918 թ. մայիսի 3-ին ԳՀԸ-ն հրատարակեց «Հայկական խնդիրը», «Նյութ կովկասյան-հայկական հարցի վերաբերյալ» վերտառությամբ հուշագիրը: Տե՛ս **Stier E**., Die Mitteilung der DAG, Marburg, den 15. August 1918 // EZA Berlin:

[4] Ուշագրավ է, որ միևնույն ժամանակ դր. Լեփսիուսի «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության մասին» գրքույկից ստացած տպավորությունների ազդեցությամբ պատգամավոր Գեորգ Լեդեբորը Հայկական հարցը քննարկման նյութ դարձրեց Ռայխսթագի լիագումար նիստում: Սակայն բացառությամբ «Leipziger Volkszeitung»-ի և «Reichs- und Staatsanzeigers»-ի՝ գերմանական մամուլը այդ իրադարձությունը անտեսեց: Տե՛ս Stier an Lepsius vom 12. Mai 1918 // LAH 1582:

սին և շեշտեց, որ շահագրգռված է հայերի գոյության պահպանման հարցում[1]:

Ռայխսթագից զատ՝ ԳՀԸ-ն ուղերձով դիմեց նաև ռայխսկանցլեր Հարտլինգին:

«Այս անգամ ևս,– գրում է Շթիրը,– հիրավի, չարիքը կանխել չհաջողվեց: Բայց եթե գերմանական կողմից հնչող բողոքը չկարողացավ կանխել Օլթիի, Արդահանի և Բաքվի ջարդերը, ապա ոչ միայն անհատ հայերի, այլև հայ ժողովրդի կենդանի մնացորդների փրկությունը հնարավոր դարձավ մեծ մասամբ գերմանացի սպաների եռանդուն միջամտության շնորհիվ»[2]:

Հայերի փրկության վերաբերյալ Է. Շթիրի վերջին տեսակետը, իհարկե, վիճարկելի է, բայց, ինչևէ, ամփոփելով նշենք, որ հայկական անկախ պետականությունը վերընձյուղվեց Արարատյան հողի վրա: 1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը՝ Երևան մայրաքաղաքով: Իսկ Թուրքահայաստանի ստեղծման ծրագիրը, չնայած գործադրված բոլոր ջանքերին, իրականություն երբևէ չդարձավ:

Грануш Саакян – ***Проблема восстановления независимой государственности Армении в 1917-1918 гг. и Немецко-армянское общество***

В статье исключительно на основе немецких первоисточников представлена деятельность Немецко-армянского общества, направленная на благо армян в ходе Брест-Литовских, Трапезундских и Батумских переговоров в 1917-1918 гг. В частности, рассматриваются призывы общества к оказанию поддержки для создания армянского самоуправления в Западной Армении, к организации возвращения изгнанных армян, а также представлены запросы, выраженные относительно ответственности Германии в вопросе истребления армян.

Hranush Sahakyan – ***The Problem of Restoration of the Armenian Independent Statehood in 1917-1918 and the German-Armenian Society***

The article focuses on the pro-Armenian activities of the German-Armenian Society during Brest-Litovsk, Trabzon and Batumi peace talks in 1917-1918, mainly based on German sources. Particularly, the article touches upon the calls made by the German-Armenian Society to support the creation of Armenian autonomy in Western Armenia, the organization of the return of exiled Armenians and the question of Germany's consensus on the extermination of Armenians.

Ներկայացվել է 02.07.2019
Գրախոսվել է 04.09.2019
Ընդունվել է տպագրության 05.11.2019

---

[1] Տե՛ս **Stier E**., Die Mitteilung der DAG, Marburg, den 15. August 1918 // EZA Berlin:
[2] **Stier E**., Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939), S. 7 (71).